

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻՍԻ Քնակ-վող մի պարտն փոխանակ իր հանգուցեալ մօր համար քելեխ տալու, 200 ռ. նուրբիւ է աղ-քանակել: Յանկալի կը լինէր, որ այս օրինա-կին ամենքը հետեւէին:

Հինգշաբթի ապրիլի 28-ին հայ դերասանա-կան խումբը մի քանի սիրողների մասնակցու-թեամբ բարեգործական նպատակով կը տայ մի ներկայացումն ԹԻՖԼԻՍԻ թատրոնում, որ կազմ-ված է հետեւեալ պիւսաներից. «Գանդան Գէվ» հեզ, Մօլիէրի, Թարգմ. Թիֆլիսի բարբառով Գ. Սոււզուկեանից և «Անանուկ կատակ» փոխադ-րութիւն Գ. Չալկեանի: Ժամանակին կը գրենք ներկայացման մասին:

ԹԻՖԼԻՍԻ վաճառականները գանգատում են, որ ապրանքը իր յայտնի ժամանակին չէ ստաց-վում և միշտ անձեղութիւններ են լինում. թէ երկաթուղու և թէ չղեկաների վրա անկարգու-թիւններ չառ են պատահում: Հակներով ապ-րանքները չառ են անգամ անհետանում են, իսկ ընկերութիւնները ճշգրտութեամբ պատասխանա-տու չեն լինում:

Խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ «Գօս Գիշտ Լամանցի» ցարութիւն դպիր Առաքելեանցի հայերէն թարգմանութիւնը, Գիր-քը տպւած է ԹԻՖԼԻՍԻՍԻՍ, Գովհանէս Մար-տիրոսեանցի տպարանում, 1878 թ.ին

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՕՐԴ ԳԵՐԲԻՒ ԱՏՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Լօրդերի խորհրդարանում ապրիլի 8-ին (մարտ 27) լոյք Բիկոնսֆիլդ առաջարկեց շնորհակալութեան ուղերձ տալ Թագուհուն, պատասխանելով նրա պատգամադրին, որով ցամաքային պահեստի զօրքերը գէնքի էին հրաւիրւում: Այդ առաջարկութիւնը ընդուն-վեցաւ միանայն, թէպէտ կառավարութեան տեսած պատերազմական պատրաստութիւն-ների դէմ խօսեցան մի քանիսներ որոնց մէջ էր նաև լոյք Գէրբին: Նրա խօսած ճառը թէպէտ չը կարողացաւ համոզել պարլամենտի մեծամասնութիւնը որ հեռանայ Բիկոնսֆիլ-դի քաղաքականութենից, այնու ամենայնիւ բաւականին տպաւորութիւն արաւ: Լօրդ

հասկանութիւնը չէ նորա կեանքի նպատակը, Այն յաջող պայմանները, որոնց մէջ նա գտն-վում է, նա գործ է ածում այնպիսի ասպարիզի վրա որ սեփականութիւն է ամբողջ մարդկու-թեան—գիտութեան ասպարիզի վրա:

Բայց այս միակ կողմը չէ, որով տարբերվում է Ժընէվը Զվիցերիայի այլ քաղաքներից. Նա ինտելիգենցիայի կենտրոն է ոչ միայն ֆրանսիա-կան Զվիցերիայի վերաբերութեամբ, ոչ նա մի-ջազգային կենտրոն էլ է: Բազմաթիւ դժգոհներ իրանց երկրի քաղաքական դրութենից ապաս-տան էին որոնում Զվիցերիայի մէջ և գլխաւո-բապէս Ժընէվը էր այսպիսի կենտրոն, ուր միշտ բազմաթիւ փախստականներ հիւրասիրութիւն և պաշտպանութիւն էին գտնում: Ամեն կողմից՝ Գերմանիայից և Ֆրանսիայից իտալիայից և Ապանիայից հաւաքվում էին Ժընէվի մէջ դժ-գոհներ և հալածվածներ, չը կարողանալով մնալ իրանց երկրի անհամբերող (երբեմն միայն ժա-մանակաւոր) ուղղութեան ազդեցութեան տակ, Այստեղ Ժընէվի մէջ նրանք միմեանց ճանաչե-լով և քաղաքականապէս կրթվելով միմեանց ազդեցութեան տակ սպասում էին աւելի յաջող ժամանակների, որոնք նրանց թոյլ կը տային կրկին մտնել իրանց հայրենիքը: Որքան բազ-մաթիւ էին ֆրանսիական և գերմանական հա-նրապետականներ, որոնք Ժընէվ էին ընտրել առժամանակվայ բնակութեան տեղ, յետոյ կը-կին Ժընէվը և դրա շրջակայքն էին տեսել կօմ-մունայի դատաւարութեանը խմբերով փախ-չել և պատսպարելի իր պատերի մէջ: Նորերումս երեքի իրօրի միմեկտեղութեան ժամանակը փա-րկող այնքան բարի եղաւ այնտեղ բնակվող սպանիական փախստականներին կրկին անգամ աքսորել արգելելով մի և նոյն ժամանակ Գերմա-նիայի մէջ բնակվել, և այս ողորդելները ստիպ-վեցան Զվիցերիայի հողը մտնել և գետեզգլել Ժը-

Դէրբին խօսած լինելով իրեն նախկին պաշտօ-նեայ արտաքին գործերի, ի հարկէ շատ հե-տաքրքրական կը լինի իր ատենաբանութիւնը որի համառօտ բովանդակութեան հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին:

«Պահեստի զօրքերի գէնքի հրաւիրվելը և շրջաբերականի հրատարակվելը, ասում է լոյք Գէրբին, իսկ գլխաւոր պատճառները չեն պաշտօնակիցներին հետ չը համաձայնե-վելու և հրաժարվելու: Կան նաև այլ պատ-ճառներ որոնց բացատրութիւնը կը թողնեմ այն օրակէն երբ խորհրդարանին կը ներկա-յացվին այն առաջարկութիւնները որոնց մասին անհամաձայն էի ես:

«Լօրդ Բիկոնսֆիլդ ասաւ թէ մարդ պիտի գտնուէ լինի որ քննաստիար համարէ Անգ-լիայի զինաւորվելը երբ ամբողջ Նւթուան գե-նաւորված է կամ զինաւորվում է: Բայց իմ ազնիւ բարեկամը մոռանում է թէ Բրիտա-նիան նաւատորմ ունի: (Ուժգին ծափահարու-թիւններ): Մենք երբեք չենք ընդունել մեծ զօրաբանակներ կազմելու դրութիւնը, որով-հետեւ մենք գլխաւորապէս ծովի վրայ կը կռվենք և Անգլիայի նաւատորմը ոչ միայն մեծ է քան թէ երկրագունտի որ և իցէ ազդի նաւատորմը, այլ և նա գրեթէ հաւասար է ամբողջ աշխարհի միացած նաւատորմներին:

«Կառավարութիւնը որոշել է գէնքի հրա-ւիրել պահեստի զօրքերը և հրատարակել է մի պարզ յայտարարութիւն ուր ասված է թէ գործերի արդի դրութեան մէջ «ստիպու-ղական պէտք» կար: Ցանկանում եմ գիտնալ թէ ի՞նչ է այդ պէտքը: (Ծափահարութիւն-ներ ընդգրկմադի կուսակցութեան նստարան-ների վրա): Ասում են թէ բանակցութիւն-ները վերջացած են կամ վերջանալու աստի-ճանին հասած, և թէ սրա հաւանական հե-տեանքն է պատերազմը: Ես այդպէս չեմ կարծել և ոչ չեմ չէ ասել թէ մենք սպասած ենք դիպլոմատիայի բոլոր միջոցները:

«Ճշմարիտ է որ բոլոր տէրութիւնները, բացի Աւստրիայից, սկզբից չէին ցանկանում մի կօնֆէրէնցիայի գումարվելը: Ես հաւա-տում եմ որ մի կօնֆէրէնցիայի գումարվելը մեծ դիւրութիւններ է տալիս Նւթուայի մի-ջազգային որոշումները պարզ կերպով հաս-տատուելու, բայց երբ կարող ենք մեր հար-

նէվ քաղաքի մէջ: Ժընէվը կարող էր շատ բա-նեք պատմել այն բոլոր տարաբաղդ քաղաքա-կան յանցաւորների մասին որոնք ապրել են նորա պատերի մէջ... անհամբերողութիւնը մի տխուր կողմն է մարդկութեան պատմութեան մէջ:

Ժընէվի քաղաքական ոգին և ազատ ձգտու-մները անկասկած հետեանքն են այն զանազան վիճակների որոնց նա ենթարկվել է ժամանակ-ների ընթացքում: Միջին դարերի անդադար հզոր հարեանների փափագ լինելով նա փոխ-խաբար վայելում էր ազատութիւն կամ պէտք է հպատակվել Բուրգունդի, Սաւոյայի դքսու-թիւններին: Սաւոյայի լծից ազատվելով Ժընէվը 18-րդ դարում Բէրնի հանրապետութեան հետ միացաւ և պահպանեց իր ազատութիւնը մինչև անցեալ դարու վերջը: 1798 թ.ին ֆրանսիա-կան հանրապետութեան նուաճող արշաւանքե-րից մինը առիթ տուեց Ժընէվը միացնել ֆրան-սիային, կազմելով նորանից մի մասնաւոր դե-պարտման: Այս օտար տիրապետութենից Ժընէվը ազատվեցաւ միայն 1814 թ.ին և միա-ւորվեցաւ Զվիցերիայի հետ իբրև 22-րդ կան-տօն: Հելվետական միացեալ հանրապետութեան:

Քանի որ ֆրանսիան կայսերական կառավա-րութեան տակն էր գտնվում, Ժընէվի քաղաքա-ցիները մէջ շատ սակաւ էին ֆրանսիայի կողմ-նակիցներ, իսկ այժմ նոքա աւելի հակումն են զգում դէպի ֆրանսիան, որ հանրապետական լի-նելով աւելի ազատական է դարձել: Եթէ ֆրան-սիայի մէջ հաստատվի բոլորովին կառավարու-թեան այդ նոր ուղղութիւնը և միապետական կուսակցութիւնները իրանց յոյսերի մասին աւելի կասկածեն, անկարելի բան չէր, որ Ժընէվը գոցէ կամաւոր կերպով միանար ֆրանսիայի հետ, որովհետեւ միշտ առանձին հակումն էր զգում ֆրանսիական Զվիցերիայի այս մասը դէպի հարե-

ցութիւններն պատասխան ստանալ քան և չորս ժամվայ մէջ Նւթուայի ամեն կողմերից, այն-չափ դիւրին կը լինի խմանալ կառավարու-թիւնների կարծիքները որչափ եթէ մի կօն-ֆէրէնցիայ եղած լինէր: Եթէ ես արտաքին գործերի պաշտօնէութեան մէջ մնացած լինէի, անտարակոյս ամեն կերպով կաշխատէի, որչափ կարող էի, որ կօնֆէրէնցիան կանգուն մնար, բայց չը հաւաքվէր, մինչև որ նրա ճանա-պարհը հարթացած և դիւրացած լինէր ա-ռանձին բանակցութիւններով զանազան տե-րութիւնների հետ: (Ծափահարութիւններ ընդգրկմադի կուսակցութեան նստարանների վրա): Կառավարութիւնը Սան-Ստեֆանոյի դաշնագրի դէմ ծանր աւարկութիւններ ա-նելուց անմիջապէս յետոյ գլխաւորված է, իբրև թէ սպասում էր պատերազմի: Ծափահարու-թիւններով ընդունեցին այդ քաղաքականու-թիւնը իբրև աներկիւղ և որոշ քաղաքակա-նութիւն: Բայց ի՞նչ կը լինի դրա հետե-ւանքը: Երկու հետեանքի միայն կարելի է համեմել Կամ, թերևս Ռուսաստանը ընդունի Անգլիայի պահանջները և մենք մի փառա-ւոր յաղթութիւն արած լինենք դիպլոմա-տիայի մէջ, բայց քանի որ Ռուսաստանից պահանջվում է հրաժարվել իր շահերի մեծ մասից որոնք պատերազմով է ստացվել, դը-ժուար է հաւաստալ որ կարելի է այդպիսի հետեանքի հասնել: Եւ կամ, թերևս մենք զեջումներ անելով, փոխենք մեր ծանր առա-րկութիւնները, բայց երբ մի բան պահանջենք, արտաքին ամեն ցոյցեր անելով թէ ուզում ենք պաշտպանել նրան ամեն կերպով, և յե-տոյ հրաժարվենք, դրեթէ ծաղրելի դրու-թեան մէջ կը դնենք մեզ:

«Աւելի լաւ կը լինէր բանակցութիւններով կարգադրել գործը, առանց պատերազմական արտաքին ցոյցերի: Այժմ թէ Անգլիայի և թէ Ռուսաստանի մէջ ժողովուրդը դրգւլած է իրար դէմ:

«Կառ կողմիցն էլ նկատենք գործը: Ենթա-դրենք թէ բանակցութիւններով երկար ժա-մանակ անցնելուց յետոյ չը կարողանանք լաղաղութեամբ կարգադրել վէճը և ստիպ-վենք պատերազմի դիմել: Այն ժամանակ Ռու-սաստանը ստիպված կը լինէր միշտ ոտքի վրա պահել իր մեծ բանակը և աւելցնել անգամ,

ամ երկրի մարդիկը, սովորութիւնները, կեանքի ձևը, մտածման ուղղութիւնը մի խօսքով դէպի ամբողջ ֆրանսիական բնաւորութիւնը:

Իբրև քաղաք Ժընէվը զարմանալի կերպով փոխվեցաւ, մեծացաւ և գեղեցկացաւ վերջին 10 տարվայ ընթացքում: Նորա բնակիչների թիւը հասնում է մօտ 48,000: Քաղաքը չափազանց հարուստ է և համարվում է ամենահարուստ ամ-բողջ Զվիցերիայի մէջ: Հարստութիւնը միայն մասնաւոր ընտանիքների ձեռքում չէ զիջված— յայտնի է որ մօտ 80—90 ընտանիք կայ որոնք միլիոնաւոր կարողութիւն ունեն—բայց և տա-րածված է բնակիչների ամբողջութեան վրա: Գա դուցէ բացի աղղ տեղական պայմաններից՝ ախլած է նաև բնակիչների աշխատասիրութե-նից:

Յատկանշել կողմը Ժընէվի հարուստների այն է որ նրանք չափազանց շատ և մեծ ընծայաբե-րութիւններ են անում և կտակներ յօդուտ քա-ղաքի: Այնթիւ բարեգործական հիմնարկութիւն-ներ, շատ ժողովածուներ, թէ գիտնական, թէ արհեստական, պարտական են իրանց գոյու-թեամբ հարուստ մասնաւոր մարդիկներին: Բայց և ամեն նոր հիմնարկութիւն, որ օգտուէտ է բնակիչներին և քաղաքին, թէ առաջինների դար-գացման, թէ վերջինի գեղեցկացնելու համար, իսկոյն արձագանք է գտնում Ժընէվացիների մօտ: Ամեն փոքրիկ հրապարակներում կը տեսնեք արձաններ այս կամ այն առիթով, այս կամ այն անձին, եղբւրկութեան, կամ գաղափարին կանգնե-ցրած Ժընէվացիների առատաձեռնութեան շնոր-հով:

Ժընէվացիք ոչ միայն միշտ պատրաստ են գումարներ գոհել, այլ գիտեն նրանց օգտուէտ կերպով գործածել: Մի քանի տարի առաջ քա-ղաքը ժառանգեց ահազին գումար Բարոնէշլայդի դուքսից որ երկար ժամանակ բնակվել է Ժընէվի

և մենք ամենքս էլ գիտենք որ նա շատ նե-ղութիւն կը կրէ հարկաւոր եղած ծախքերին գիմանալու համար: Մեզ վրա չեն յարձակի-լիս մենք պատերազմական տեսակէտից նոյե-լով, ազատ ենք մեր ուղեցած ժամանակին նստաշարձակ լինելու: Ծովերը մեր հրամանի տակ են: Եթէ պատերազմ լինի, հաւանական չէ որ ծովը վրա մի ուստական պատերազ-մանաւ երեւի Ռուսաց բանակը չէ կարող սպանալ և ոչ մի բրիտանական երկրի Ռե-լինն ես չեմ հասկանում թէ ի՞նչ պատճառ կայ որ մենք ստիպվէինք աճապարկ ցամաքի վրա պատրաստութիւններ տեսնելու:

«Իմ ազնիւ բարեկամս ասաց թէ Ռուսաս-տանի բանակը կարող է սպանալ Նիդպոտ-սին, Ասորեստանի ճանապարհով: Առաջին անգամն է որ լսում եմ այդ խօսքը: Մենք մինչև այժմ այնպէս ընդունած էինք թէ ով որ տէր կը լինի ծովին, նա կարող է դիւրաւ պաշտպանել Նիդպոտսը: Այլ օակայն Ռուսաց բանակը ի՞նչպէս կարող կը լինի Ասորեստանի միջից առաջանալ և անապատից անցկենալ Նիդպոտս հասնելու համար առաջ քան թէ մեր պատերազմաւորները հասնեն Ալեքսան-դրիա:

«Երբեք հարց կայ որոնք վաղ թէ ուշ պէտք է քննենք: Այնքան են մեր կուսերը միջոցները, որոնք են մեր բաշխակիցները և ուժ համար ենք կուսում:

«Պարզ երևում է որ եթէ Անգլիայի և Ռուսաստանի մէջ պատերազմ ծագէ և չը միջամտէ ոչ մի տէրութիւն կարելի է որ այդ պատերազմը շատ երկարատեւ լինի: Մեզ շատ դիւրին կը լինի կործանել Ռուսաստա-նին, բայց մի և նոյն ժամանակ մեծ հարկած կը տանք բուն մեր հայրենակիցների հարս-տութիւններին, Ռուսաց արժէթղթերի գի-նիւրը պակասեցնելով, մինչև անգամ Ռուսաս-տանին անակացնելով չենք կարող վերջ տալ պատերազմին, որովհետեւ պատերազմ-ները երբեք չեն բազաւած փողը պակասե-լով: Որչափ էլ աղքատ լինի Ռուսաստան, և ճշմարիտ է որ աղքատ է, երկու բան կայ որ երբեք չեն պակասել այդ անհուն երկրի մէջ, մարդ և ուտեստ: (Լսեցէք, լսեցէք): Եւ երբ պատերազմի այդ երկու էական նիւթերը ան-սահման քանակութեամբ գտնվում են մի

մէջ և կտակել է իր ամբողջ կարողութիւնը այս հիւրասէր քաղաքին:

Գլխաւոր գումարը պէտք է գործ դրվի համալ-սարանի վրա, նոր լաբորատորիումներ շինելու համար և այլն. բայց դուքոր և իրան չը մոռա-ցաւ, նա ուղեցաւ որ նորա անունը մնայ անմո-ռաց Ժընէվի մէջ և դրա համար իր կտակի մէջ պայման դրեց, որ թողած գումարից յայտնի մասը գործածվի նորա յիշատակին մի արձան կանգնեցնելու համար այն քաղաքի մէջ, որին նա անբաժան նուիրեց իր ունեցածը... Արձանը կարծես շուտով կանգնեցրած կը լինի:

Չարմանալի բան է, որ այդ քաղաքը, որ շատ աւելի գեղեցիկ է դարձել այժմ քան թէ էր նա տառն տարի առաջ, երբ ես նորան առաջին անգամ տեսայ, այնու ամենայնիւ իմ վրա այն-պիսի սաստիկ տպաւորութիւն չը գործեց այժմ ինչպէս այն ժամանակ: Բայց և այն ժամանակ-վայ տպաւորութիւնը անպատճառ պէտք է մեծ լինէր, որովհետեւ բոլոր պայմանները ժամանակ առանձին էին: Չը նայելով որ մինչև Ժընէվը հասնելու համար ես անընդհատ չորս օր և չորս դիւրի երկաթուղու մէջ էի, դա էլի առաջին արեւմտեան եւրոպական քաղաքն էր, որ ես տեսնում էի, եթէ չը հաշուէ որ Բերլինի մէջ ես ամբողջ քաղաքով կառ-քի մէջ անցկացայ, և այն էլ անձրևային օր էր, որ երկաթուղու արեւ-ւելեան կայարանից հասնելու դէպքի Անշալտեան երկաթուղու կայարանը, որտեղից պէտք է չա-րուսակէի ճանապարհորդութիւնս դէպի Զվիցե-րիան: Աթէ նմանապէս չը հաշուէ, որ մի գիշեր, կամ աւելի լաւ է ասել 5 ժամ, անցկացրի Օւ-տէն գլխիկաւան քաղաքի մէջ, որովհետեւ կէս գիշերին այնտեղ հասնելով ոչ մի կառախումս այլ ես չէր շարունակում ճանապարհ դէպի Ժընէվը: Այդ սովորութիւնը դրեթէ ամբողջ Զվիցերիայում այժմ էլ կայ որ երկաթուղու

երկրի մէջ որի ժողովուրդը ոգևորված է պատերազմական ոգով, այնտեղ պաշտպանողական պատերազմը կարող է շատ երկարատև լինել: Դուք կարող էք պաշարել ուստի նաև հանդիսանալ որ Թուրքիայի Թուրքիայի ցորեն և այլն չը հասնի Անգլիայի, բայց փետուրի կողմին միայն չե լինի և ուստի փառապանութիւնը իրան ճանապարհ բաց կանի գերմանական նաւահանգիստները: ձմարի, անգլո-ուստի մի պատերազմ կը նմանի գերմանացի ուսանողների մեծամարտութիւններին որոնք իրանց սրբութիւն չեն կարող խորին վերքեր բանալ: կարող են ստեղծել հարուածներ տալ իրարի քիթ կտորել աչքերը հանել, բայց չեն կարող մահացու հարուածներ տալ:

(կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 2 ապրիլ 1878

Ազգային գործերն հանդարտ և լուս վիճակի մէջ են. խորհան, խորհն, խորհնան հետի են Կ. Պօլսէն և մենք անհամբեր կը սպասեմք նոցա լուրերուն: Խորհն եպիսկոպոս մասին գոհացուցիչ լուրեր կը ստանամք. Պետերբուրգի մէջ լաւ ընդունելութիւն գտնելն կը յուսադրէ ըզմեզ: կարեւոր այցելութիւններ կընդունի. Kolnische Zeitung-ի մէջ կը կարդանք թէ իշխան Գորչա-կով փոխարքայն այցելութիւն է տուել Խորհն սրբազանին, խորհան հայրիկի փարիզ հասնելն լսեցինք: Թերեւս այժմ Վոնգոն լինի. Հայրիկ մեծ ընդունելութիւն է գտել Հոլլանդի մէջ որ իւր այցելած առաջին մայրաքաղաքն է: Խառնակաւ կառավարութիւնը գոհացուցիչ խոստումներ է տուել հայրիկին և յուսադրեմք թէ հա-յոց խորհրդը կը պաշտպանէ դեսպանաժողովին մէջ: Իսկ Ֆրանսիայէն դեռ լուր չունենք. երբ ստանանք, կը փութանք հարցողել ձեզ: Խորհր-լան սրբազանի վերադարձին կը սպասեմք 1): Թէպէտ այստեղ իբրեւ ստոյգ կը համարեն թէ ձեռնադրանք յետ կը դառնայ:

Տեսնելով թէ եւրոպական ամեն տէրութիւն-ներ, մինչև անգամ Ռուսաստան և Անգլիա որ արեւելեան խնդրի մի քանի կէտերուն մէջ ան-
1) Տրապիզոնի գրված է մեղ թէ մարտի 31-ին խորհրդան սրբազան հասել է Տրապիզոն և նոյն օր Տրապիզոնից գնացել է Կ. Պօլս. Ռուսիա ապրիլի 2-ին երեկոյն կամ 3-ին հասած կը լինի Կ. Պօլս:

կառավարութիւնը չեն մանգալիս գիշերվայ ժա-մանակ: Այսպիսով արեւմտեան Եւրոպայի առաջին քաղաքը որ ինձ ներկայացնում էր, ժը-նէլ էր, և ես հետաքրքրութեամբ նայում էի ա-մեն մանրամասնի վրա, որոնք ինձ նոր և անսովոր էին երևում. Նրկորդ պատճառ որ ժընէլ առանձին տպագրութիւն իմ վրա գործեց այն ժամանակ այն էր, որ ես այնտեղ իմ ամենա-մօտ բարեկամս պէտք է գտնէի երկու տար-վայ բաժանմունքից յետոյ. Ամեն մի ժամ որ լրանում էր, ինձ յիշեցնում էր որ աւելի և ա-ւելի մօտենում էի ժընէլից ու ինձ այդ մեծ զուարճութիւնն էր սպասում բարեկամս վերջա-պէս գրել և աշքոյն համարվել որ նա այլ ևս տկար չէ ինչպէս այն ժամանակ, երբ մենք բա-ժանվեցանք և բժշկները նրան հարաւ ուղարկե-ցին:

Նրբէք չեմ մոռանայ ես այն տպաւորութիւնը որ իմ վրա գործեց ժընէլը որով ես մենակ ոտով էի անցնում, իմ բազալը մի մարդուն յանձնած լինելով—բարեկամս ինձ այդ օրը չէր պատում, իմ սեփական սխալի պատճառով—նայում էի այդ զարմանալի քաղաքի վրա որ մի խառնուրդ էր ներկայացնում նոր փառաւոր չե-նութիւնների և հին միջնադարեան ամրոցաձև, բարձր և նեղ տներ, այդ փողոցների, որ նման չէին Պետերբուրգի ուղիղ, լայն և բոլորովին հորիզոնական ճանապարհներին, այլ աւելի նմա-նում էին սարերի ուղիներին, որոնք բարձրա-նում և ցածանում են կամ զառիվայրներով են անցնում: Բայց էլ այդ քաղաքը ես առաջին տպաւորութիւններից սրելեցի, նկատելով որ այս քաղաքը իր անցեալը, իր աւանդութիւններն ունի, որ այս զարմանալի և անհասարար արտաքին տեսքը հետեանք է նորա շարժուն պատմական կեանքի. որի ամեն մի էպիզոդը թողել էր տե-սանելի յիշատակներ:

Համաձայն են, հայոց մասին երկուքն ալ հա-մաձայնում են, ուստի կը խորհին մի նոր առա-ջարկութիւն ներկայացնել դեսպանաժողովին: Սոցա ծրագրին այս է որ, թերեւ թէ Ռուսիային և թէ Անգլիային միանգամայն հաճելի լինի: Թէպէտ խաղաղութեան դաշնագրին 16-որդ յօդուածը հայոց կը պատկանի, բայց դա ար-գելք չէ եղած որ թիւրք կառավարութիւնն գուն-դաղունդ չէրկէսներ, որի է Հայաստան: Ամեն օր բազմութիւն չէրկէսներ կը տարուին Սամսոն և այնտեղէն կը ցրուին Ամասիա, Եւզոկիա, Սե-բաստիա և չըլնակայներն ուր սոսկալի անդիտու-թիւններ և յափշտակութիւններ կանեն: Պատ-րիարք սրբազան ազգու թագրերով բողոքեց Բ. Կրան, բայց առաջին անգամը չէ որ Բ. Կրանը պատրիարքարանի թագրերներուն խօսքով ուրիշ կերպ կը պատասխանէ, իսկ գործով ուրիշ: Բ. Կրանը անփետ կը համարի չէրկէսներու Հայաս-տան դրկուին, քանի որ ինք դաշնագրին համե-մատ յանձն առած է պաշտպանել հայերը նոցա դէմ:

Տեղւոյս ազգային լրագիրները Հայաստանի մէջ գործուած նորանոր բարբարոսութեանց լու-րերը կը հրատարակեն: Ռուսաց և թիւրքաց մէջ խաղաղութիւն լինելով, երբ ուստական զոր-քերն յետ քաշուին են խնուէն, քուրդերը Խը-նուսի մէջ (որ Կարինի և Մուշի մէջտեղ կը գը-տուի) տարասփիլի կերպով կոտորել են հայերն և այնպիսի բարբարոսութիւններ արեւ են որ մարդ կարգացած ժամանակ բոլոր մարմնով կը դողայ: Խնուէն պատրիարքարան հասած աղեր-սագիրն ներփակուած կուղարկենք ձեզ որմէ կա-րող էք գաղափար ստանալ այդ սոսկալի կոտո-րածին վրա: Կառավարութիւնը մի ազդարարու-թիւն հրատարակեց որով կը յայտնէ թէ սաստիկ հրամաններ դրկուած են յանցաւորները պատ-ժելու համար: Բայց այդ սաստիկ հրամաններ վանի հրդեհին համար ալ ուղարկուեցան, Բա-յաղէտի և Ալաշկերտի կոտորածին համար ալ ուղարկուեցան, իսկ ինչ արդիւնք ունեցան: Վանի չուկայն հրդեհող զօրքերը պատժուեցան: Բայաղէտի հայերն կոտորող քուրդերը դատա-պարտուեցան. մարդակերպ գազան չէին Զէլա-լեղինը բանտարկուեցան: Այս ամեն հարցում-ներու պատասխանը բացատրական է դժբաղդա-պէս: Զարմանալի զուգահիշակութիւն. ամեն ան-գամ որ հայ ազգն մի քիչ կը շարժի, Հայաս-տանի մէջ ալ մի սոսկալի աղէտ կը պատասխա-նէ այդ շարժումին: Երբ Կ. Պօլսոյ դեսպանաժո-ղովին ժամանակ պատրիարքարանը հարստա-հարութեանց պաշտօնական մի տեղեկագիր հրա-տարակեց, Վանի հրդեհի լուրը առկէր. երբ անցած տարի ամառին, եւրոպական մամուլը Հայոց մասին կը գրէր, Ալաշկերտի և Բայա-ղէտի կոտորածն լսեցինք: Այժմ ես երբ եպիս-

Վերջապէս հասայ ես և Բուր դը Բուր (Bourg de Four) անուանված հրապարակ, որ պատկա-նում էր բուն հին քաղաքի և յատկանիշ տեսք ունէր իր միջնադարեան անհրով և մի և նոյն ժամանակ ամբողջ հրապարակի վրա գտնվող ծա-ւերով: Բարեկամս բնակվում էր № 7 տան մէջ մի ոչ շուշլ այլ սիրուն մի բնակարանի մէջ ուր ես տեղեկութիւնացի բարեկամսից զալը սպասելով: Տանտիրիկը, մի պարսաւ կին, ինձ սիրով ընդու-նեց առաջարկելով մինչև անգամ ինքն բա-րեկամս գնալ որոնելու, բայց ինչ տեղ... ես շնորհակալութիւնս յայտնեցի, վճռեցի աւելի լաւ սպասել: Որքան էլ անհամբեր էի վերջապէս բարեկամս ձեռքը սեղմելու, բայց ես ինձ նորա բնակարանի մէջ մենակ չէի զգում: Նորա բնա-կարանը ինձ այնքան ինձ և հետաքրքրեց բա-նէր էր ներկայացնում—մի գործունէայ, մտաւոր կեանքի ապացոյցներ էր բովանդակում, որի մէջ ինձ համար ամեն ինչ նոր էր և գուցէ առժա-մանակ իր նորութեամբ էր գրաւում, Գա մի մեծ սենեակ էր, որի մի պատը գրեթէ ամբող-ջապէս մի պատուհանից էր բուսած, որ զանա-զան բաժանմունքներից էր բաղկացած և հայտնա-վէր զէպի հրապարակը. սենեակի մէջ տեղ կան-գնած էր մի մեծ կլո սեղան, որի չորս կողմ թափուներ էին դրած և մի բաղկաթու—Ֆրան-սիական սովորութեան համեմատ պատուաւոր նստարան հիւրի համար:

Մի պատի մօտ մի կամի (բուխար) զար-դարած մի մեծ հայկերով, միւս պատի մօտ մի կամի դիվան. իսկ երրորդ պատը աւելի խոր էր մտնում և ներկայացնում էր ալ Կօվ. մի փոքր սենեակ, որի մէջ միայն անկողնակալի և գլխը-վայ սեղանի համար տեղ կար:

Այլ սեղանն էր որ զխաւարապէս ուշադ-րութիւնս գրաւեց: Նա ծածկած էր զանազան գրքերով, որոնք զխաւարապէս քաղաքապետե-

կողմներ զնայած են Կ. Պօլսէն Եւրոպա, Խնուսի սարսափելի կոտորածն կը կատարուի և չէրկէսներ կուղարկուին Հայաստան: Այս ամենը տեսնել յետոյ որ խելացի մարդ կարող է ասել թէ Տաճկաստան չուղէր փնայնել հայերը:

Կերի թէ այժմ թիւրք կառավարութիւնը մեծ փափագ ունի ցոյց տալու թէ իւր ձեռքը Հայաս-տանէն մաս չէ մնացած ալ: Ինչ որ Հայաս-տան էր, անցաւ ուստաց: Երկու օր առաջ, «Stamboul-ի» մէջ մի յօդուած կարդացինք «Les Arméniens de Kurdistan» վերնագրով, ուր հարե-ւանցի յիշուած է նաև Խնուսի կոտորածն և գրուած է թէ հայերն իրաւունք ունին օսմա-նեան կայսրութեան պաշտպանութիւն յուսալու: Բայց «Stamboul» լրագիրն որ թիւրքաց «Երե-տասարդ թիւրքի» անուն կուսակցութեան օրգանն է, եղբիտական մի լեզու կը գործածէ և իբր թէ հայոց ծառայութիւն մատուցանելու պատրուանով այժմ կուզէ միշտ ֆուրգտան բառն յտալ տանել և Հայաստան ու ֆուրգտ-տան բառերը չիթիթել տալով: Հայաստանը ֆուր-գտան կարծեցունել: Գիտէք թէ որոնք են ֆուրգտանի հայեր (Les Arméniens de Kurdistan) անուանածներն. Վանի, Մուշի (!) և այլ կող-մերի հայերը: Եւրոպայի հակաթիւրք լրագիրները անշուշտ կարգալի «Stamboul-ի» այդ յօդուածը, թիւրք կառավարութեան համար ալ մի մեծ հա-րուած չէ այդ դի մի քանի հարստահարութիւն աւելի, կամ մի քանի հարստահարութիւն պակաս լինելով, մեծ տարբերութիւն չը լինի նորա հաշուէկոնին մէջ Եւրոպայի առջև: Բայց ֆուր-գտան բառը Հայաստանի տեղ գործուած և յառաջ տարուած կը լինի մինչև անգամ հակա-թիւրք լրագիրներն մէջ. եւ մեզ յետոյ պիտի հարցնեն թէ ո՞ր է Հայաստան, Ռուսիա հար-կաւոր է զգոյշ լինել թիւրք կառավարութեան այս նոր քաղաքական խաբէութեան դէմ: Ինչ-պէս կարելի է ֆուրգտան անուանել, օրինակ, Վան գաւառն, ուր թիւրքերն, քուրդերն և բո-չայներն միասին հաշուելով, դարձեալ շատ պա-կաս են թուով քան թէ միայն հայերը: Վանի մէջ թիւրք մանրամասններն անգամ հայերէն լեզուով կը ծախեն փողոցներ չըլած ժամանակ. ուր շատ թիւրքեր հայերէն գիտեն, մինչ շատ հայեր թիւրքերէն չը գիտեն:

Կ. Պօլսի բոլորովին տարբեր կերպարանք առած է ուստաց այստեղ հասնելէն յետոյ. Գալատայի, Պերայի մէջ ուստ պաշտօնակալաց կառքերն գրաւած են փողոցներն. այժմ ես պարզ զինուորներով լցուած են. Նիկիոյ մեծ իշխանն յաճախ կերթեկել Կ. Պօլս, Ռուսներն Սան-Ստեֆանոյի մէջ հայերուն մասնաւոր հա-մակրութիւն ցոյց էր տան, որմէ զուրկ են յոյ-ները. այս պատճառով շատ տեղեր յոյները զի-րենք իբրեւ հայ ցոյց կը տան: Սան-Ստեֆանոյի

տական բովանդակութեան էին և մանաւանդ զոցա մէջ ես շատ հատորներ գտայ որոնց վրա Proud-hon ինձ այն ժամանակ անձանթ անունը կար-դացի: Բայց միայն ծանր բովանդակութեան գրքեր չէին կլո սեղանի վրա, կային և նոր բօմաներ, և պատմական գրքեր, մեծաւորներ, որոնց թուում Mme Rolland, Ֆրանսիական առաջին յեղափոխութեան ամենանշանաւոր կա-նանցից միին մեծաւորներն: Առաջին տպաւո-րութիւնը որ գործել էր իմ վրա կլո սեղանը ան-կարգութեան տպաւորութիւնն էր, բայց յետոյ ես նկատեցի, որ այդ անկարգութեան մէջ մի ներքին ներդաշնակութիւն կար՝ վերջը ես հա-տկացայ որ սեղանի ամեն մի մասը իր նպատակ ունէր՝ մի կողմը դրած էր թուղթը, թանաքա-մանը և ամեն ինչ որ գրելու համար է պա-հանջվում և նորա առաջ մի սկզբած հայերէն յօդուած, դորանից վերջ ինչ հետեւ ծանր բո-վանդակութեան գրեանք և սեղանի երկու այդ մասերի առաջին էլ դրած էին հասարակ աթոռ-ներ, իսկ բաղկաթու դրած էր սեղանի այն տեղի առաջ որի վրա բացարձակ մնացել էր մի նոր բօման... Այս բոլորը ինձ մասամբ հա-կանալի արեց բարեկամս սովորութիւնները, առանց որ ես նորա տեսած լինէի. յետոյ մտաւ տանտիկինը և պատմեց ինձ թէ բարե-կամս այս ինչ ժամին է ծաշում, այս ինչ ժամին այս ինչ կաֆէ է գնում լրագիրներ կարդալու և այլն, և այլն: Տանտիկինը կրկին սենեակից հեռացաւ թողնելով միայն իր կատուն, որ մօ-տենում էր ինձանից և սեղմվում էր ոտերիս մէջ:

Թէ և հոկտեմբեր ամիսն էր, եղանակը դեռ շատ տաք էր. ես մօտեցայ պատուհանին, հե-ռացրի նորա վրա դրած ծաղիկները և բաց արի պատուհանը: Հովը փչեց երեսիս և ես չը գի-տեմ որքան երկար ժամանակ մնացի պա-

ուսական բանակին մէջ մի քանի հայ պաշտօ-նատարներ ալ կան որոնք այցելութեան եկան Կ. Պօլսի և իւրեանց զգացումներ և արի կեր-պարանքն լաւ տպաւորութիւն գործեցին հայոց վրա: Մուրաւով քնդապետն որ արքունի թիւի-նապահաց խուճին կը պատկանի, շատ սիրելի և ժողովրդական եղած է այստեղի հայոց մէջ: Ի պատիւ իրեն խնջոյքներ տրուեցան: Տեղա-կան հայ լրագիրները մեծ համակրութիւնով գո-վեստներ հրատարակեցին իւր վրա, ինչպէս և ուրիշ մի քանի հայ պաշտօնատարներու վրա: Ռուս զօրավարներ շատ անգամ այցելութիւն կը գան մեր պատրիարքարան և գոհ կը վերադառ-նան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնի «Standard» լրագրի Կ. Պօլսի թըղ-թակցը, ապրիլի 22-ից հեռագրում է հետե-ւեալը. «Ռուսները Սան-Ստեֆանոյում հաւա-քեցին մեծ քանակութեամբ պաշար, Նոքա չա-րունակում են ուղարկել Օդէսայից թարմ զոր-քեր Սան-Ստեֆանոյ. Նրանք Արիւստայոյի չըլնակներից նոյնպէս զօրքեր են կանչում. որ այս զօրքերը կարողանան մասնակցել շուտով լինելու մեծ զօրակալին, Ռուսները պատրաս-տել են տալիս Սան-Ստեֆանոյում ամառվայ շրեր 150,000 մարդկերանց համար:

—«Times» լրագրին Բուլղարից հեռագրում են ապրիլի 20-ից, որ «Կարմիր խաչի» գլխաւոր անդամներից մէկը, որ նոր է եկել հիւանդանոց-ները քննելուց յետոյ Բուլղարիայում, պատմում է, որ բացի վիրաւորվածներից, ներկայումս հի-ւանդանոցներում գտնվում են 4000 հիւանդ ուղ-դատներ: Տիֆ տարափոխիկ հիւանդութիւնը նոյնպէս տարածվում է և մանաւանդ նա սաս-տիկ է Ֆիլիպպոլում, Տրնօլում, Սիստօլում և Նիկոպոլում: Ռուսաց այն օֆիցերները որոնք կարճ ժամանակով արձակված էին, նորից հե-ռագրով կանչված են իրանց ծառայելու տեղը:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 25-ին ապրիլի: Ռուսաց

պետական բանկի 50% տոմսակը առաջին շը-ջանի արժէ 97 ր., երկրորդ 95 ր., եր-րորդ 94 7/8 ր., չորրորդ 95 ր., առաջին ներքին 50% փոխառութեան տոմսակը արժէ 229 ր. 50 Կ., երկրորդ 226 ր., արեւելեան 93 3/4 ր., ոսկի 8 ր. 50 Կ.: Տրամադրու-թիւնը շատ ամուր է:

տուհանի մօտ մտածելով այն կեանքիս մասին որ ահա պիտի սկսեմ և որ ինձ բոլորովին ան-ծանօթ էր՝ միայն մի բան գիտէի եւս, որ նոր կեանքս պիտի բոլորովին տարբեր լինէր ան-ցեալ կեանքիցս... Յանկարծ դուռը բացվեց և հետեալ վայրկեան բարեկամս ու ես իրար գըր-կախաւում էինք պահում...:

Ինչպէս անցկացան այդ գեղեցիկ օրերը ինձ համար, որոնք ժամանակ ես ազատութեամբ լը-սում էի և կանաւետիս պատմածները արեւմտեան Եւրոպայի մտաւորական կեանքի մասին, աւելորդ է յիշել: Ես շատ տխուր էի, երբ վճռեցի շարու-նակել ճանապարհորդութիւնս—իմ վերջական նպատակս էր խառնել գնալ և մասնաւորապէս Վէնէյի:—Բայց այս պատեական օրերի յիշա-տակը մնաց կենդանի և մի բանաստեղծական զոյն ստացաւ իմ յիշողութեանս մէջ... Այս անգամ էլ, տասն տարուց յետոյ, ես չը կարո-ղացայ զսպել ինձ որ չը գնամ Bourg de Four հրապարակը և տեսնեմ այն տունը, ուր առաջին անգամ յարաբերութիւններ կապեցի եւրոպական ոգու հետ և ուր վայելեցի սիրավիւր հիւրընկա-լութիւն. թող այժմ վերստին ընդունի իմ շնոր-հակալութիւնս... Ինչպէս տաս տարի սրանից առաջ ես պատուհանից նայում էի դէպի հրա-պարակը, այնպէս ես այս անգամ ներքե կանգ-նեցայ № 7 տան առաջ և երկար նայեցի այն ծանօթ պատուհանի ուղղութեամբ... Բայց շատ բան փոխված էր և եղանակը որ այն ժամանակ թէ և հոկտեմբերին ինձ ժպտում էր, այժմ թէ և ապրիլին լաց էր լինում... Անձերը այնքան սաստկացաւ որ ստիպեց ինձ հեռանալ...:

Ա. Արծրունի

